10.46991/ai.2022.25.1.109

ՎԱՉԳԵՆ ՀԱԽՈՅԱՆ

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ 1920-1921 ԹԹ.

Բանալի բառեր *– Կարս, Վանանդի նահանգ, Շիրակի նահանգ, ցեղասպանություն, կոտորածներ, քեմալականներ, ականատես, վկայություններ, հուշագրություններ, որբեր, գերիներ, հայրենազրկում*

Հայ պատմագրությունը 1920-1921 թթ. Կարսում տեղի ունեցած իրադարձություններին անդրադարձել է հիմնականում թուրք-հայկական պատերազմի համատեքստում: Հայ պատմաբանները վերլուծության են ենթարկել մասնավորապես Կարսի անկման պատճառները, ռազմաքաղաքական խնդիրները, մինչդեռ բնակչության կոտորածների ամբողջական պատկերի վերակազմությունը կարծես թե դուրս է մնացել նրանց տեսադաշտից:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել Կարս քաղաքում քեմալականների իրականացրած ցեղասպան գործողությունները և դրանց հետևանքները: Համադրել ենք ազգագրական և բանահավաքչական դաշտային աշխատանքների տվյալները*, Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերից ու ժամանակի մամուլից քաղված նյութերը, ինչպես նաև մասնագիտական գրականության մեջ օգտագործված տեղեկություններ: Ուսումնասիրվել են նաև թեմային առնչվող Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդերում պահվող ձեռագիր հիշողությունների բաժնի հուշագրությունները:

Ներածություն

Հայոց ցեղասպանությունից տարիներ անց, երբ հայ ժողովուրդը վերընձյուղվեց և վերակերտեց բաղձալի պետականությունը (1918 թ.), որը խաթարվել էր շատ դարեր առաջ, ցեղասպան թուրքական պետությունը նորից իր սուրը ուղղեց դեպի Հայաստան:

1918 թ. հայերի նահանջից հետո թուրքերը տիրել էին հայերի բնակավայրերին և մեծ դժվարություններ առաջացրել գաղթականության համար նախկին վայրերում վերաբնակվելու խնդրում: Ոչնչացվել էր ամեն բան. այրվել էին ազգաբնակչության քանակին առնչվող բոլոր տեղեկամատյանները, կազմալուծվել էր գյուղական համայնքների վարչական կազմը: Ամենուր շրջում էին

* 1921 թ. Փամբակի տարածքում ապաստանած վերապրածների ժառանգների շնորհիվ մեզ հասած հիշողությունները պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում:

միայն հրոսակախմբերը։ Բնիկ հայերից ոչ բոլորը հայրենադարձվեցին, որովհետև մի մասը մնաց Հյուսիսային Կովկասում (Ռուսաստան)[1]։

1918 թ. գաղթի ժամանակ շատ գյուղացիներ ոչինչ չէին կարողացել տեղափոխել, ոմանք շատ չնչին բան էին տարել, որովհետև ՀՀ կառավարության կարգադրությամբ խմբապետները ժողովրդին արգելում էին գաղթել՝ պատճառաբանելով, որ զինվորները, տեսնելով, թե ինչպես է իրենց թիկունքը դատարկվում, խուճապի կմատնվեին և ռազմաճակատներից դասալքության կդիմեին։ Ուստի երբ թուրքական զորքերը մոտենում էին որևէ բնակավայրի, տեղի հայ բնակչությունը այլևս ժամանակ չէր ունենում կազմակերպված տեղափոխվելու, ստիպված խուճապահար փախչում էր[2]։ Հուշագրող Արտաշես Մաթևոսի Ալեքսանդրյանը (ծնվ. 1897 թ. Կարսում), որի ընտանիքը 1918 թ. Կարսից փախել էր Թիֆլիս, պատմում է, որ Կարս վերադառնալը վտանգավոր էր. լուրեր կային, որ տեղի թուրքերն այդպես էլ մնացել էին իրենց տեղերում՝ հուսալով, որ հայերը դժվար թե իրենց դիպչեին։ Նրանց համոզմամբ ոչ ոք չէր կարող ապացուցել, որ այս կամ այն անձը հայ է սպանել կամ նրանց նեղություն պատճառել։ Յուրաքանչյուր թուրք թաքցրած զենք ուներ և անհրաժեշտությոն դեպքում այն կգործադրեր։ Շատ հայեր սպանված էին, և թուրքերը շարունակում էին ապրել հայերի հարմարավետ տներում։ Ոմանք տան հատակի տախտակները պոկել էին, ախոռներ սարքել[3]։

Հայաստանի հետ Կարսի մարզի վերամիավորումից հետո՝ մինչև 1919 թ. հունիսի 3-ը, այնտեղ վերադարձավ շուրջ 300.000 գաղթական, իսկ 1919 թ. հունիսի 4-ին Ալեքսանդր Խատիսյանը Հայաստանի խորհրդում հայտարարեց. «Ղարսի նահանգի երեք քառորդն արդեն մեր ձեռքում է։ Օլթիին մի քանի օրից կտիրենք»[4]։

1920 թ. քեմալական արշավանքը, թուրք-հայկական պատերազմը և Կարսի անփառունակ անկումը ողբերգական հետևանքներ ունեցան Վանանդի, այնուհետև Շիրակի նահանգների[*] համար։

1920 թ. պատերազմի ընթացքում, հոկտեմբերի 28-ին կատարելով ուժերի համալրում և վերադասավորություն, թուրքական զորքերը դիմում են նոր

---

[1] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 636, թ. 5-6։

[2] Տե՛ս ՀՑԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 217։ «Հանդիպում Ե. Չարենցի հետ», էջ 3-4։ Հուշագրող՝ Վահան Միքայելի Մարտիրոսյան (Կարս, գ. Ճալա)։

[3] Տե՛ս ՀՑԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 219։ 1920 թ. Կարս։ Քաղվածք «Ծանր տարիներ» պատմավեպի ձեռագիր հուշագրությունից, էջ 4, **Ալեքսանդրյան Ա.**, Կարս 1920-21, Երևան, 1986, էջ 5։

[4] Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Կարսի խնդիրը և նրա շուրջ ծավալված պայքարը (1918 թ. դեկտեմբեր-1919 թ. ապրիլ) // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2004, թիվ 3, էջ 34, Հայաստանի խորհրդարան // «Հայաստանի աշխատավոր», 1919, թիվ 66, էջ 2։

[*] Հարկ է նշել, որ մինչ թուրքական հարձակումը Հայաստանի Հանրապետության տարածքը ենթարկվել էր նոր վարչական բաժանման՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց նահանգների։ Տե՛ս Հայաստանի նահանգների նոր բաժանումը // «Յառաջ», 1920, թիվ 126, էջ 2։

հարձակման Կարսի ուղղությամբ և եռօրյա կռիվներից հետո՝ նույն ամսի 30-ին, կոտրելով հայկական զորքերի դիմադրությունը, գրավում այն[1]: Թուրքական զորքը գրոհում է բերդաքաղաքը, որտեղ հավաքվել էին խաղաղ բնակիչները՝ իրենց փրկությունը այստեղ գտնելու ակնկալիքով: Տների ու եկեղեցիների բակերում ապաստանել էին Սարիղամիշից, Կաղզվանից, Օլթիից, Արդահանից փախած բնակչությունը, ինչպես նաև Կարսի շրջակա գյուղերի բնակիչները[2]: Մինչև թուրքական զորքերի Կարս մտնելը հայ զինվորները խորապես համոզված էին, որ Կարսի վրա հարձակվողները բոլշևիկներ էին, որի պատճառով չդիմադրեցին[3]:

Կոտորածները և հետևանքները Կարսում

Կարսի անկումով նահանգի հայ բնակչության համար սկսվում են արյունոտ օրեր. չխնայվեցին ո՛չ կանայք, ո՛չ երեխաները: Կարսում սոսկալի դեպքեր են տեղի ունեցել, մարդկային երևակայությունից դուրս գազանություններ են կատարվել քեմալական սպաների, զինվորների, տեղի թուրքերի և քրդերի կողմից: Շատ ընտանիքներ լրիվ մորթվել են: Սպանում էին միայն հայերին, բացառիկ դեպքերից էր հրեա դեղագործ Ռեյիշանի և նրա կնոջ սպանությունը[4]:

Հայտնի է, որ քեմալական բանակում գործում էին նաև աշիրեթական երկու գնդեր, ադրբեջանական հեծելազորի հարյուրյակ, լեզգիների հեծելագունդ և քրդական, թաթարական ու թուրքական անկանոն հրոսակախմբեր[5]: Կարս քաղաք առաջինը ներխուժեցին քուրդ հեծյալները, որոնք կատարեցին տարատեսակ զանգվածային բռնություններ, գնդակահարություններ: Այն խաղաղ բնակիչները, որոնք չկարողացան թաքնվել, անխտիր գնդակահարվեցին, իսկ բռնությունների ենթարկված կանանցից փրկվեցին միայն նրանք, ովքեր կարողացան պատսպարվել ամերիկյան որբատներում[6]:

Դեպքերի ականատես Սարգիս Հարությունյանը (ծնվ. 1907 թ. Ղարալում [այժմ Կաթնաջուր Լոռու մարզում]) գրում է. «Հոկտեմբերի 30-ին Կարսը հանձնվեց: Թուրքական բանակը եկավ և որպես արյունարբու վիշապ գրա-

---

[1] Տե՛ս **Կարապետյան Մ.**, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Երևան, 1996, էջ 125:

[2] Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 22-23:

[3] Տե՛ս **Եսայեան Ա.**, Ղարսի արիւնոտ օրերը // «Կոմունիստ», 1921, թիվ 47, էջ 2:

[4] Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 78, **Եսայեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2, ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 33 (Արամ Եսայանցի վկայությունը, 1921 թ. փետրվարի 2, Երևան):

[5] Տե՛ս **Տէր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղէտը, քէմալական արշաւանքը, Կարսի եւ Ալէքսանդրաբօլի անկումները, հայ բանակին քայքայումը, յարձակման եւ քայքայման պատճառները, պալշէվիքեան տիրապետութիւնը (անտիպ փաստաթուղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ), Կ. Պոլիս, 1921, էջ 93:

[6] Տե՛ս **Հարությունյան Վ.**, Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920 թ. հունիս-1920 թ. նոյեմբեր): Հայկական բանակի սպայի հուշերում, Երևան, 2019, էջ 85:

վեց քաղաքը։ Մարդիկ տեսնում էին թշնամու սև օղակը, իսկ թուրք ասկյարները հրճվալի աչքերով նայում էին հայ կանանց ու աղջիկներին և սրում ժանիքները։ Հոկտեմբերի 31-ի գիշերը ծանրացավ քաղաքի վրա, իր սև թևերի տակ պարուրեց բնավեր բնակչությանը։ Բռնությունից տառապող երեխաների, կանանց և աղջիկների ձայնը սաստկացավ, առաջացավ սոսկալի խուճապ, երբ թուրքական արնածարավ զորքը լցվեց քաղաք։ Մի օրում որբացավ շքեղազարդ բերդաքաղաքը, երեսուն հազար բնակչության մեծ մասը սրի քաշվեց, իսկ ավելի փոքր մասը արտաքսվեց Թուրքիայի խորքերը»[1]։ Երբ թուրքերը առաջին անգամ մտան Կարս, զորքն ու խուժանը սկսեց թալանել և կոտորել հայերին առանց սեռի և տարիքի խտրության, մոտավորապես 15.000 անձինք դարձան այդ կոտորածի զոհերը[2]։ Բնակիչները սպանվում էին ամենայն դաժանությամբ։ Գրավելով Կարսի կայարանը՝ թուրք ասկյարները սվիններով անխնա կոտորում են գնացքի մեջ եղած կանանց, աղջիկներին, երեխաներին, ծերերին, հիվանդներին։ Վագոնների կտուրների վրա գտնվողներին սպանում են հրացանների համազարկերով։ Մինչ այդ հաջողվել էր երկու գնացք ուղարկել Ալեքսանդրապոլ[3]։

Կարսի գրավման ու հետագա գործողությունների ընթացքում, ըստ թուրք ականատեսների վկայության, քաղաքում կոտորվել է 8000 մարդ[4]։ Ռումինիայի քաղաքացի Վասիլ Իոնեսկոն 1921 թ. հունվարի 27-ին մենշևիկյան Վրաստանում Հայկական ՍՍՌ լիազոր ներկայացուցչությանը ուղղված իր նամակում հաղորդում է, որ ինքը 1920 թ. հոկտեմբերի 30-ին գերի է վերցվել թուրքերի կողմից և մեկ ամիս անց ազատվել ու ժամանել Կարս։ Նա թուրք բժիշկ Նուրի-բեյից տեղեկանում է, որ քաղաքում սպանվել են ութ հազար հայեր (կանայք, երեխաներ և տղամարդիկ), սակայն իր դիտարկումներով սպանվածների թիվը 10-12.000-ից ավելի էր[5]։

Թուրքական կոտորածները քաղաքում ըստ տարբեր սկզբնաղբյուրների՝ տևել են երեքից-հինգ օր, երեք օր անց փաշան հրամայել է մաքրել քաղաքը դիերից[6]։ Սակայն մասնակի սպանությունները շարունակվել են։ Քաղաքում

---

[1] **Հարությունյան Ս.**, Երիտասարդ շրջանի տեսածներս ու լսածներս, «Կյանքի ճանապարհ», հուշագրություն, Երևան, հրատարակվել է ձեռագրի իրավունքով, որպես հուշանվեր, էջ 31-32։

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36 (դեկտեմբերի 9-ին Կարսից փախած, ամերիկացիների մոտ թաքնված Մոսկվայի կոմիտեի պաշտոնյաներից Արամ Լյուլիկյանի վկայությունը)։

[3] Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 31։

[4] Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 179։

[5] Տե՛ս **Սարգսյան Ե.**, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, 1964, էջ 498, **Ներսիսյան Մ.**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, 2005, էջ 146։

[6] ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 32 (Կարսի գրավման ժամանակ ամերիկացիների մոտ թաքնված և դեկտեմբերի 7-ի գիշերը Կարսից փախած՝ իգդիրցի ուսուցիչ Խշտոյանի հայտարարությունը)։ Տե՛ս նաև **Եսայեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2։

տեղ-տեղ լսվում էին կրակոցներ, իսկ գիշերները՝ կանանց ձայներ[1]:

Բոլոր պահեստները, մառանները, թաքստոցները լիքն էին երեխաների, կանանց և երիտասարդների դիերով: Եղել էին ընտանիքներ, որոնցից ոչ մի անձ ողջ չէր մնացել[2]: Նկուղներում, թախտերի տակ, տարբեր այլ վայրերում թաքնված երիտասարդներին դուրս էին տանում, մի քանի քայլ հեռացնելով՝ սպանում կամ գերեվարում և անհայտացնում: Քաղաքի ծայրամասերում թաքնվածների մեծ մասը անխտիր կոտորվել է[3]:

Քաղաքում կատարվել էր նաև սպանությունների ծիսականացում: Թուրքական դաժանության մի պատկեր է Թաիրով Սերգեյի սպանության տեսարանը: Նախապես կապել են նրա ոտքերն ու ձեռքերը, հետո գլխատել: Նրան մորթել էր թուրք դասաբը (մսագործ), որն աշխատելիս է եղել հենց նրա մոտ[4]:

Կարսում և շրջակա գյուղերում զանգվածային կոտորածները շարունակվել են երկու շաբաթ: Սպանվածների թիվն անհամար էր[5]: Զանգվածային կոտորածների ահասարսուռ երեք օրերի ընթացքում քաղաքից դուրս՝ բաց դաշտում, կատարվել են նաև ողջակիզումներ. հայ երիտասարդների վրա նավթ են լցրել և կենդանի այրել[6]:

Այդ արյունալի օրերի ժամանակակից Արամ Եսայանցը փոքրաթիվ մարդկանց հետ թաքնված է եղել հիվանդանոցում, որտեղ իր քաղաքացիական կինը՝ Վերա Պետրովնա Սոկա-Եսայանցը, պատմում է, թե ինչեր է տեսել: Վերան (ամերիկյան չորրորդ հոսպիտալի գթության ավագ քույրը) և նույն հիվանդանոցի գթության քույրեր Կասակովսկայան, Աղամալյանը (որը շատ նման է եղել ռուսի) և Շիշենինը հինգ-վեց օր շրջում էին քաղաքի ձեղնահարկերում և նկուղներում վիրավոր բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալու համար: Որոշ տներում նա տեսնում էր տղամարդկանց, կանանց ու երեխաների շուրջ 30 դի: Մի քանի օրերի ընթացքում նա տեսնում էր շուրջ 3000 սպանվածի[7]: Կարսի գրավման ութերորդ և իններորդ օրերին Ա. Եսայանցը անձամբ տեսնում է, թե ինչպես էին սայլերով տեղափոխում սպանված խաղաղ բնակիչների դիերը: Այդ չորս-հինգ օրվա ընթացքում նա հաշվում է դիերով լի շուրջ 50 սայլ[8]: Քսաներեք օր շարունակ սայլե-

---

[1] ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 32: Տե՛ս նաև **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 85:

[2] Տե՛ս **Եսայեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2:

[3] Տե՛ս **Ավետիսյան Մ.**, Փաստաթուղթ Կարսի հայ բնակչության կոտորածի մասին «Կարսի Սբ. Լուսավորիչ եկեղեցու ծխատեր Կորյուն քահանա Քոթանջյանի զեկուցագիրը Գևորգ Ե կաթողիկոսին՝ քաղաքի անկումից հետո հայ բնակչության նկատմամբ կիրառված բռնությունների մասին» // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, թիվ 1, էջ 102:

[4] **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 32:

[5] **Սարգսյան Ե.**, նշվ. աշխ., էջ 498:

[6] **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 103:

[7] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 33 (Արամ Եսայանցի վկայությունը, 1921 թ. փետրվարի 2, Երևան):

[8] Նույն տեղում:

րով ու բեռնասայլերով դիեր են տեղափոխել քաղաքից դուրս։ Ողջ մնացած հայերին բանտարկում էին, ոմանց սպանում, իսկ ոմանց բռնությամբ ուղարկում ծանր աշխատանքների. լծում էին սայլերին կամ սպանված հայրենակիցների դիերն էին փոխադրել տալիս[1]։

Թուրքերը առաջնահերթ ոչնչացնում էին արական սեռի ներկայացուցիչներին։ Բռնաճնշումների էին ենթարկվում հայ զինվորները։ Կարս մտած թուրքերը մերկացրել են գերի ընկած հայ զինվորներին և ուղարկել դեպի Էրզրում՝ ճանապարհին նրանց կոտորելու համար, ինչպես արել էին 1918 թ. Ալեքսանդրապոլի շրջանի գյուղացիության հետ։ Զինաթափում էին ամբողջ հայ ազգաբնակչությանը և զինում «ոչ հայերին»[2]։

Կարսը գրավելուց հինգ օր անց թուրքերը գերի ընկած շուրջ 1500 զինվորների ուղարկում են Էրզրում։ Այնուհետև 18 վագոնով տեղափոխում են շուրջ երկու հազար ձերբակալված երիտասարդների[3]։ Կոտորածից փրկված տղամարդկանց մի մասին ուղարկում են Սարիղամիշ, քաղաքից և շրջակայքից մինչև դեկտեմբերի 9-ը ուղարկում են 15-60 տարեկան շուրջ 30.000 տղամարդ։ Քաղաքում արական սեռի հայեր գրեթե չէին մնացել[4]։ Էրզրում փոխադրելուց առաջ Կարսում հայ տղամարդկանց ենթարկում էին անասելի տանջանքների, ծեծի և բռնության, տաժանակիր աշխատանքների։ Մինչև Էրզրում գերիներից շատերին ճանապարհին սպանում էին սոսկալի ձևերով։ Գիշերները մինչև հինգ հոգի հանում են գնացքի կացարանից՝ իբր աշխատանքի տանելու կամ «մեծավորին» ներկայանալու պահանջով, և սպանում[5]։ Հայ գերիներով լեցուն գնացքին թուրքական գյուղերի կայարաններում թուրք կանայք դիմավորում են ատելությամբ՝ քարերով, փայտերով և կացիններով հարձակվելով և սպանելով նրանց[6]։

Ձերբակալվածներին օրերով հաց ու ջուր չեն տվել, ինչի պատճառով շատերի լեզուները ուռել են, նրանց ամբողջովին մերկացրել են, եղել են նաև տղամարդկանց բռնաբարության դեպքեր[7]։

Կարսում տղամարդկանց նկատմամբ հաշվեհարդարը հետապնդում էր մի քանի նպատակ՝ հավանական դիմադրության ճնշում, անարգել բռնություններ կանանց և երեխաների նկատմամբ, հարկադիր աշխատանք։

---

[1] Տե՛ս **Ավետիսյան Մ**., նշվ. աշխ., էջ 101-103։

[2] Տե՛ս Կարսում, Ալեքսանդրապոլում // «Յառաջ», 1920, թիվ 245, էջ 4։

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 43 (Կարսի շրջանից փախստական Գևորգ Գևորգյանցի վկայությունը)։

[4] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36։

[5] Տե՛ս **Ավետիսյան Մ**., նշվ. աշխ., էջ 101։

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 101-102։

[7] Տե՛ս **Ներսիսյան Մ**., նշվ. աշխ., էջ 145-146, Հայոց պատմություն, հ. IV, Նորագույն ժամանակաշրջան. գիրք առաջին (1918-1945 թթ.), Երևան, 2010, էջ 216։

Ձորի կոտորածը

Թուրքերը հիմնականում շրջափակում էին հայ փախստականների նահանջի ուղղությունները՝ նրանց ենթարկելով կոտորածների: Այսպես, Կարսի ականատես-վերապրածները հաճախ էին հիշատակում ձորի կոտորածը:

Կարսի հայ բնակչությունը հայկական զորամասերի՝ դեպի քաղաք նահանջից և քեմալական զորքի կողմից Կարսի գրավումից հետո մատնվում է անխնայ դեպի խուճապի: Հիմնականում կանանցից, երեխաներից և ծերերից բաղկացած բնակչությունը դիմում է խուճապահար փախուստի, նախընտրում դեպի ձորը՝ Ալեքսանդրապոլ տանող նախկին խճուղու ճանապարհը (այստեղ էին շտաբի շենքերը, նաև ամերիկյան հսկողության տակ գտնվող որբանոցները): Ով ինչով կարող էր՝ կառքերով, ավտոմոբիլներով, ձիերով, էշերով, շատերը բեռներն ու երեխաներին թիկունքներն առած, մանուկների ձեռքերից բռնած, երեխաներին անգամ կորցրած, փախչում էին այնտեղ՝ պաշտպանություն գտնելու կամ դեպի Ալեքսանդրապոլ հեռանալու հույսով: Մարդ ու անասուն խառնվել էին միմյանց, առաջացել էր աննկարագրելի իրարանցում: Ճանապարհն այնքան է լցվում մարդկանցով, որ առաջ շարժվելն անհնար է դառնում[1]: Գրավելով կարևոր բարձունքները՝ թուրքերը բարձրացնում են կարմիր և սպիտակ դրոշներ. այս տեսնելով՝ ժողովուրդը հանդարտվում է[2]: Օգտվելով ստեղծված դրությունից, երբ անպաշտպան խաղաղ բնակչությունը լցվում է ձորը, քեմալականները դիմում են դաժան կոտորածների: Ասկյարները և քուրդ հրոսակները անմիջապես համախմբվում են ձորի երկու կողմերի բարձունքներում և գնդացիրներով անգթորեն կոտորում ժողովրդին: Առաջին փախչողները կամ ամերիկյան որբանոց հասնողները մի կերպ փրկվում են, իսկ մեջտեղում և վերջում գտնվողների մեծ մասը սպանվում է: Կրակում են անընդհատ, գնդակները կարկուտի պես թափվում են մարդկանց վրա: Ձորում նեղ, ճոճվող մի փայտից սարքված կամուրջ է լինում, որը տեղացիները «Մազե կամուրջ» էին անվանում: Այդ կամրջի վրայով անցնելիս մարդիկ ընկնում են գետը. այն տանում է մարդկային դիեր, զանազան իրեր[3]:

---

[1] Տե՛ս **Տ. Տ. Գարեգին Ս. Արքեպս. Յովսէփեան** կաթողիկոս Կիլիկիոյ, կենսագրական նօթեր, Կեանքիս ամենադժբախտ օրը (Կարսի անկումը) եւ երջանկութեանս ոոպէն, Յոբելինական պատգամ եւ մեր իղձերն ու յոյսերը, տպարան Սահակ-Մեսրոպ Գահիրէ, 1945, էջ 23, **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101: ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 176, «Կարսի անկումը» Խորէն քահանայ Ստամբոլցեանի յիշատակարանից, 1920 թ. Կարսում, էջ 10, ֆ.հ. 177, կազմեց՝ Կարինե Աղաբաբյանը, էջ 7: Նույն տեղում, բաժին 8, ֆ.հ. 275, «Հուշագրություն», էջ 19-21, ֆ.հ. 276, էջ 4-5: Տե՛ս նաև՝ Ելենա Լևոնի Աբրահամյանի վկայությունը՝ **Սվազլյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 191-193: (Ելենա Աբրահամյանը (ծնվ. 1910/12 թ. Կարսի մարզ, Ծպնի) Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցու քահանա տեր Խորեն Ստամբոլցյանի թոռնուհին է, որը հրաշքով է փրկվել Կարսի ձորի կոտորածից): Տե՛ս նաև **Ալեքսանդրյան Ա.**, էջ 34-36:

[2] **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145:

[3] Տե՛ս ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 275, **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101, **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 33:

Թուրքերը փակել էին ձորից Ալեքսանդրապոլ տանող միակ ճանապարհը, գրավել Մազրա գյուղը, կայարանը, ձորի կամուրջները, ամերիկյան կոմիտեի ձորի որբանոցներն ու ռազմական շտաբի շենքը[1]: Այս շրջափակման մեջ ժողովուրդը ենթարկվում է կոտորածի: Կարսի ձորի տեսարանը ականատեսներն անվանում են՝ «դժոխք», «դժոխային խառնուրդ»[2]:

Ձորում շատերի երեխաները սպանվում են, խեղդվում Կարսաչայ գետում[3]: Ականատես Սրբուհի Ստեփանի Անդրեասյանը (ծնվ. 1900 թ., Կարս), որի ամուսնուն թուրքերը սպանել էին, իր երեխայի հետ հայտնվում է գնդացրային կրակոցների տակ: Նա, փոքրիկ աղջկան գրկած, մյուս բնակիչների հետ վազում է, ասկյարները կրակում են, փամփուշտը դիպչում է երեխայի գլխին և խոցում կնոջ ձեռքը (մինչև կյանքի վերջը նրա ձեռքի վիրավոր մատները մնում են ծալված): Ինչ-որ չափով առաջանալուց հետո նա տեսնում է, որ գլխի հրազենային վնասվածքից երեխան մահացել է[4]: Գնդացրային կրակը տևում է մեկ ժամից ավելի[5]:

Ձորի կոտորածներից մանրամասներ է հաղորդում նաև ականատես Գարեգին Հովսեփյանցը, որը գեներալ Փիրումյանի ցուցումով բարձրանում է Կարսի բերդը՝ հայտնելու հայկական կողմի անձնատվության և խաղաղ բնակչությանը կոտորածից փրկելու մասին: Հագնվում, վեղար է դնում, կախում եկեղեցական պանագիան (շրջանակված սրբապատկեր, որը կաթողիկոսը շնորհում է նոր օծված եպիսկոպոսին), կապում է քաջության ժապավենը, մի օդաչու սպայի և գնդապետ Տեր-Առաքելյանի հետ նստում են երկձի կառքը և ձողի վրա ամրացված սպիտակ սավանով ճանապարհ ընկնում դեպի բերդ: Երեք օր շարունակ ջրհեղեղի նման անձրև է տեղում: Խճուղիներից մեկով բարձրանալիս նրանց շրջապատում են մի քանի տասնյակ ասկյարներ՝ մի սպայի ղեկավարությամբ: Պատասխանում են սպայի տված հարցերին, թե ովքեր են և ուր են գնում (օդաչու սպան տիրապետում է թուրքերենին և կատարում է թարգմանչի դերը): Թուրք սպան կանգնում է կառքի պատվանդանին և նրանց ուղեկցում: Ճանապարհին հանդիպում են ասկյարների կողմից շրջապատված հայ զինվորների, որոնց կողոպտում էին՝ հանելով նրանց հագի շորերը: Լեռնաշղթայից դեպի ձորը ձգվող ցածր պարսպաշար է լինում, որոնց հետևում պատսպարված թուրք զինվորները համազարկեր են տալիս դեպի ձորը: Կարգադրող սպան, ձիու վրա նստած, մոտենում է եպիսկոպոսին և հարցնում նրանց ով լինելը: Հովսեփյանցը

---

[1] Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, էջ 34-36:

[2] Տե՛ս ՀՑԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 176, էջ 10, ֆ.հ. 177, էջ 7, **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 33:

[3] Տե՛ս **Սվազլյան Վ.**, նշվ. աշխ., էջ 192:

[4] Բանասաց Ալվարդ Ցոլակի Հախոյան (ծնվ. 1953 թ., Վանաձոր): Ականատեսի թոռը: Պատմությանը տեղեկացել է ականատեսից:

[5] Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145:

նրան դիմում է փոքրիկ ճառով՝ կոչելով նրան փաշա (նրա կարծիքով՝ այդ մարդը ունեցել է գնդապետի աստիճան, մինչդեռ «փաշայով» դիմում են գեներալներին) և ասում, որ ձորը լցված է հասարակ բնակիչներով, կանանցով և անմեղ երեխաներով, և որ այնտեղ են որբանոցները: «Զինվորականը որքան քաջ, նույնչափ վեհանձն, գթոտ պիտի լինի». դիմում է՝ մարդասիրություն դրսևորել և խնդրում դադարեցնել կրակը: Գնդապետը մի փոքր մտածում, այնուհետև ձեռքով նշան է անում, և կրակը դադարում է[1]: Այսպես Հովսեփյանցի միջնորդությամբ ձորի կոտորածը դադարում է:

Ըստ Գեղամ Գևորգի Հարությունյանի (ծնվ. 1899 թ. Ապարանի շրջան, Ծաղկահովիտ գյուղ) վկայության (Կարսի գրավման ժամանակ կոտորածից փրկվում է՝ հասնելով Ամերիկյան որբանոց, մի ամիս ծպտվում որբանոցի աշխատողի հագուստով, բայց ասկյարների կողմից որբանոցը ստուգելու ժամանակ գերի է տարվում)՝ ասկյարները 50-60 երիտասարդ գերիների հետ իրեն տանում են, և ձորի ճանապարհով անցնելիս ջրի մեջ նրանք տեսնում են սպանված հայերի հազարավոր դիեր: Նրանց ծեծում են՝ թույլ չտալով նայել այդ կողմ: Նրան հարցաքննում են, պարզում, որ աշխատել է Կարսի փոստ-հեռագրատանը, և ասկյարների հսկողության տակ նույն հեռագրատանը տեղավորում են աշխատանքի՝ հեռագրալարեր պատրաստելու: Կարծես թե հրաման էր եղել այդ ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայից, որ դադարեցնեն հայերի կոտորածը, այնինչ Կարսում միայն մի տան մեջ մի քանի ծեր կանայք էին մնացել կենդանի: Այլք Կարսաչայ կոչվող գետում էին՝ սպանված ու սառած: Երկու ամիս հեռագրատանը աշխատելուց հետո նրան տեղափոխում են բանտ, ենթարկում հարկադիր աշխատանքի, հետո նա կարողանում է մի կերպ փախչել[2]:

Այսպիսով քեմալականների կողմից Կարսում իրականացված զանգվածային կոտորածների հիմնական վայրը «Կարսի ձորն» էր, որտեղ կոտորվեց փախուստի դիմող հայ խաղաղ բնակչության զգալի մասը:

Բռնաբարքները կանանց և երեխաների նկատմամբ

Ինչպես նշվեց, քեմալականները չխնայեցին նույնիսկ կանանց և երեխաներին: Կոտորածների օրերին և դրանից հետո ասկյարների կողմից կանայք ենթարկվում էին բռնությունների: Զինված թուրքերը մտնում էին հայերի տները, բռնաբարում կանանց և աղջիկներին, շատերին տանում իրենց հետ: Այս ու այն տնից լսվում էին սոսկալի ճիչեր[3]: Հայ կանանց հետ վարվում էին, ինչպես

---

[1] Տե՛ս **Տ. Տ. Գարեգին Ս. Արքեպս. Յովսէփեան**, նշվ. աշխ., էջ 24-26:

[2] «Կենսագրությունը և Ղարսից գերությունից փախչելը» // ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ.հ. 173:, էջ 1-14:

[3] Տե՛ս Կարսում, Ալէքսանդրապոլում // «Յառաջ», 1920, թիվ 245, էջ 4: Ժամանակի մամուլը վկայակոչում է մի քանի հայերի պատմությունները, որոնք հասել էին Երևան՝ մի կերպ ճողոպրելով Կարսից: Տե՛ս ՀԱԱ ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 32:

ցանկանում էին։ Քաղաքում հայ տղամարդ գրեթե չէր մնացել[1]։ Վ. Իոնեսկոն, ներկայացնելով քաղաքի գրավման ու կոտորածի ահասարսուռ պատկերը, վկայում է, որ բազմաթիվ կանայք նետվել են Կարսաչայ գետը և խեղդվել[2]։ Կարսի շրջանից փախստական Գևորգ Գևորգյանցը փաստում է, որ բոլոր երիտասարդները՝ թե՛ տղամարդ և թե՛ կին, թաքնվել էին թուրքերից։ Երիտասարդներին և զինվորականներին գերի ուղարկելուց հետո թուրքերը սկսել են թալանել ու բռնաբարել այլոց[3]։ Բոլոր կանայք, բացառությամբ երկու-երեք ընտանիքների, որոնց պաշտպանել են օսերը, բռնաբարված և վարակված են եղել։ Շատերը գտնվել են թուրք սպաների ու զինվորների մոտ, իսկ մի մասին քրդերը տարել են իրենց գյուղերը[4]։ Շատերն էլ, չկարողանալով տանել սպասվելիք խոշտանգումները, իրենք էին սպանում երեխաներին ու կանանց, այնուհետև՝ իրենց։ Բախչիենց Կարոյի մեծ տղան՝ դեղագործ Միսակը, որի կինը ռուս էր, տեսնելով, որ ասկյարն իր ու երեխաների աչքի առաջ փորձում է բռնաբարել կնոջը, չի հանդուրժում այդպիսի խայտառակությունը, սպանում է այդ վայրենուն, բայց վախենալով, որ տնեցիներին մեծից փոքր չարաչար կմորթեն, մորֆի է սրսկում բոլորին, ապա՝ և իրեն։ Սակայն տեսնելով, որ ներգործությունը ուշանում է, կտրում է բոլորի և իր արյունատար երակները[5]։

Հայերի նկատմամբ բռնությունները շարունակվում են նաև կոտորածներից հետո։ Ըստ Կարսի Սբ. Լուսավորիչ եկեղեցու ծխատեր Կորյուն քահանա Քոթանջյանի վկայության՝ կենդանի մնացածներին վերադարձնում են քաղաք, տղամարդկանց՝ առանձին, կանանց՝ առանձին, իբր իրենց տներում բնակեցնելու նպատակով, սակայն տեղավորում են կայարանի կողմերում գտնվող տախտակյա պահեստանոցներում և քաղաքային բանտերում։ Բանտարկվածներին կողոպտում և մերկացնում են, օրեր շարունակ քաղցի ու ծարավի մատնում։ «Կանանց հետ պատահածը… աննկարագրելի էր, այս դժբախտները կիսամերկ դարձան իրենց տները»[6]։

Զմռանը՝ հայ բնակչության բռնի տեղահանությունների ժամանակ, նույնիսկ չէին դադարում բռնությունները կանանց ու աղջիկների նկատմամբ։ Այդպիսի մի սոսկալի դեպք է տեղի ունենում Ղզլչախչախի կայարանում։ Երբ գնացքը կանգնում է հիշյալ կայարանում, ասկյարները մտնում են մի վագոն, ծեծում ու կողոպտում են մարդկանց, հետո 17-ամյա դեռատի աղջկան բռնաբարում են ծնողների ու գաղթականների ներկայությամբ[7]։

Թուրք-հայկական պատերազմի ընթացքում միայն Կարսի նահանգում

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36։
[2] **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 145։
[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 43։
[4] Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 146։
[5] Տե՛ս **Ալեքսանդրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 78։
[6] Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 101։
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 104։

քեմալական զորքերը կոտորեցին, գերեվարեցին տասնյակ հազարավոր հայերի, չխնայեցին անգամ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող 6000 որբ հայ երեխաներին, որոնց չնչին մասը մնաց Հայաստանում[1]: Ասկյարները շարունակում են իրենց բռնարարքները ամերիկյան որբանոցներում ապաստանածների նկատմամբ՝ կոտորելով կամ առևանգելով նրանց: Ամեն գիշեր այնտեղից դեռատի կույսեր են տանում, ինչպես նաև՝ որբանոցի հասակավոր աղջիկներին: Որբանոցում մնացողներից շատերը ահաբեկված խումբ-խումբ փախուստի են դիմում լեռնային զանազան անանցանելի ճանապարհներով, բայց նրանց մի մասին հետապնդող բարբարոսները գնդակահարում են: Կարսի անկումից ամիսներ անց մնացյալ որբերի հետ Ալեքսանդրապոլ է հեռանում նաև ամերիկյան որբանոցի ընդհանուր լիազոր գնդապետ Քոքսը[2]: Փոխարենը Էրզրումից Կարս են տեղափոխվում երկու հազար թուրք որբեր[3]: Հարկ է նշել, որ դառնալով թուրքական քաղաքականության զոհ՝ 1920 թ. նոյեմբերին Ամերիկյան օգնության կոմիտեի կողմից Ալեքսանդրապոլի որբանոցներից Կարս էին տեղափոխվել 10.000 հայ որբեր, որոնցից միայն 6000-ը կրկին վերադարձավ Ալեքսանդրապոլ (1921 թ. փետրվար-մարտ ամիսներին): Տեղափոխության ժամանակ թուրքերը հարձակվում են գնացքի վրա, տանում մեծ տղաներին և աղջիկներին, իսկ փոքրերը մահանում են ցրտից և համաճարակից, որոնց դիերը դուրս են նետում գնացքի պատուհաններից, որպեսզի համաճարակը չտարածվի[4]:

Հայրենազրկում և կողոպուտ

Կարսում կոտորածներն ուղեկցվում էին հայ բնակչության զանգվածային ունեզրկմամբ և թալանով: Տներն ու խանութները թալանվում էին, առգրավված սննդամթերքն ու ապրանքներն անմիջապես փոխադրվում էին Էրզրում[5]: Եթե կոտորածի զոհերը միայն հայերն էին, ապա թալանի պարագայում կողոպտվում էին ոչ միայն հայերը, այլև այլք[6]: Բռնությունների էին ենթարկվում նաև Կարսի շրջանի մոլոկանների տասնյակ գյուղեր[7]: Առան-

---

[1] Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը 1920-1923 թթ. // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2001, թիվ 4, էջ 15: ՀՀ օրենք (նախագիծ) Թուրքիայի հանրապետության կողմից հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքների բռազավթումը (օկուպացիան) և հայերի մեծ հայենազրկումը դատապարտելու մասին // https://www.gov.am/files/docs/1651.pdf /27.11.2020/:

[2] Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 103:

[3] Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 15:

[4] Տե՛ս **Ալեքսանյան Կ.**, Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի գործունեությունն Ալեքսանդրապոլի գավառում 1919-1921 թթ. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», 2018, թիվ 21, էջ 132-134:

[5] Տե՛ս Կարսում, Ալէքսանդրապօլում, էջ 4: Ժամանակի մամուլը վկայակոչում է մի քանի հայերի պատմությունները, որոնք հասել էին Երևան՝ մի կերպ ճողոպրելով Կարսից:

[6] Տե՛ս **Եսայեան Ա.**, նշվ. աշխ., էջ 2:

[7] Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 15:

ձին դեպքերում հայերի տների վրա հարձակվում էին նաև այլազգիները, մասնավորապես՝ տեղի և մոտակա գյուղերի մոլոկանները ավազակային խմբերի հետ՝ ասկյարների, քրդերի ու տեղական թուրքերի համազգեսներով, որպեսզի անճանաչելի մնան: Նրանք հարձակվում էին հայերի տների վրա, կողոպտում, սպանում և բռնաբարում կանանց ու աղջիկներին[1]: Թուրքերն անմիջապես ձեռնամուխ եղան Կարսից Սարիղամիշ և Կարին փոխադրելու այն ամենը, ինչն արժեք էր ներկայացնում՝ զենք, արկեր, գործարանների ու արհեստանոցների մեքենաներ, կահ-կարասի և այլն[2]՝ այսպիսով իրականացնելով պետական և մասնավոր ունեցվածքի կողոպուտ:

1920 թ. սկսված կոտորածները, այնուհետև բռնաճշումները ավարտվեցին մինչև 1921 թ. գարնանն իրականացված տեղահանումները. Կարսում և նահանգում մնացած հայերի բեկորները բռնի վտարվեցին իրենց հայրենի հողից: Այդ ամենը կատարվում էր ձմռան սառնամանիքին: Ոստիկանները հայ բնակչությանը նախօրոք զգուշացնում էին՝ պատրաստ լինել գնացքներով Ալեքսանդրապոլ տեղափոխվելու: Անտեսվում էին բնակիչների խնդրանքները՝ մինչև գարուն սպասել: Մեկնումը նշանակվում էր առավոտյան ժամը 8-ին, որպեսզի ոչ ոք չկարողանար որևէ իր տեղափոխել: Մարդիկ առավոտյան չէին կարողանում սայլ գտնել: Նրանց խնդրանքների պատասխանը լինում էին հայհոյանքը, հրացանի կոթերով և մտրակներով հարվածները: Դեռ չհեռացած բնակիչների տները թալանվում են: Կայարան հասցված իրերը դարձյալ խուզարկվում և թալանվում էին: Կայարաններում կողոպուտի նպատակով գնացքներն ուշացնում էին 1,5-2 ժամ, երբեմն՝ ավելի[3]:

Հայրենազրկված կարսեցիները հայտնվում էին ծանր վիճակում՝ ապահովություն չունենալով նաև Հայաստանի այլ վայրերում: Սանահնի մոտ անպատսպար 6000 հայ գաղթականների ճակատագրի մասին է հայտնում գաղթականների գործերով Թիֆլիսից եկած Մարիամ Զավարյանը: Վրաստանի կառավարությունը մերժում է թույլ տալ նրանց շարունակելու ճանապարհը Վրաստանի տարածքով: Սանահնի վրաց իշխանությունը հայտնում է, որ եթե Հայաստանի կառավարությունը կարգադրություն չանի այդ հարցով, նրանք դուրս կհանեն գաղթականներին Վրաստանի տարածքից: Զավարյանը դիմում է Ղարաքիլիսայի հեղկոմին, որպեսզի միջոցներ ձեռք առնեն գաղթականներին տեղափոխելու հարցում: Հեղկոմը հայտնում է, որ իրենք նման լիազորություն չունեն, բայց մինչ Երևան դիմելը գաղթականներով լեցուն մի հինգվագոնանոց գնացք ուղարկում է Ալեքսանդրապոլ: Գնացքում է լինում նաև Ղարաքիլիսայից թուրք սպա իր հետևորդներով: Ջաջուռի թունելի մուտքի առջև գնացքը խրվում է ձյան մեջ և կանգ առնում՝ մնալով երկու օր: Ջաջուռի թուրք զինվորները և խուժանը, տեղեկանալով այդ մասին, գիշերը հարձակվում են

---

[1] Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 102:
[2] Տե՛ս **Սարգսյան Ե.**, նշվ. աշխ., էջ 498:
[3] Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 103-104:

գնացքի վրա և թալանում գաղթականներին՝ շատերին թողնելով միայն ներքնաշորերով։ Սարսափահար գաղթականները մեկին ուղարկում են Ղարաքիլիսա՝ հեղկոմից խնդրելով նոր գնացք՝ վերադառնալու համար, որովհետև այդտեղ մնալու դեպքում նրանց սպառնում է թուրքական կոտորած։ Ահաբեկված գաղթականները հեղկոմի ջանքերով վերադառնում են Ղարաքիլիսա[1]։

Կարսի նահանգն իր գավառներով Հայաստանի Հանրապետության հարուստ, բարեբեր և կենսական նշանակության նահանգներից էր[2]։ Թուրքերի կողոպուտի հետևանքով նրա բնակչությունը ունեզրկվեց, իսկ Հայաստանի Հանրապետությունը կորցրեց իր տնտեսական նշանակության նահանգներից մեկը։ Կարսը իր մեծությամբ Հայաստանի Հանրապետության երրորդ խոշոր քաղաքն էր (Երևանից և Ալեքսանդրապոլից հետո) և պատմական Հայաստանի երբեմնի մայրաքաղաքը։

Թուրքերը Կարսում տեղի բնակչության հետ սրի են քաշում նաև Վանանդի նահանգի տարբեր շրջաններից, գյուղերից ու քաղաքներից այստեղ ապաստանած հայ բնակչությանը։ Նրանք, ովքեր Կարսի անկումից հետո դիմել էին փախուստի և հասել Ալեքսանդրապոլի գավառ, տեղի բնակչության հետ կոտորածի են ենթարկվում Շիրակի նահանգի տարբեր վայրերում։ Ալեքսանդրապոլի անկումից հետո վիճակն ավելի աղետալի դարձավ։ Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայարանը ամեն ինչ գտնվում էր թուրքերի ձեռքում[3]։ Հետևաբար փախուստի դիմած և փրկության ակնկալիքով այս շրջաններում պատսպարված Կարսի նահանգի բնակիչներն ապահով չէին նաև այդտեղ։

Այսպես, օրինակ՝ 1920 թ. նոյեմբերի 15-ից 18-ը Փամբակի հովտի (Ղարաքիլիսայի գավառ) Ղալթախչի (այժմ՝ Հարթագյուղ Լոռու մարզում), Ղարաբոյա (այժմ՝ Խնկոյան Լոռու մարզում), Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբյուր Լոռու մարզում) գյուղերում տեղի բնակչության հետ կոտորածի են ենթարկվել նաև Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից այստեղ ապաստանած 7500 փախստականներ[4]։ Շատերին հաջողվում է գնալ նոյեմբերի 18-ի զինադադարով սահմանված Նալբանդ կայարանով անցնող թուրք-հայկական զորքերի «չեզոք գոտի» և իրենց փրկությունը գտնել Ղարաքիլիսայի գավառի այլ բնակավայրերում։ Բռնագաղթի հետևանքով Ալեքսանդրապոլում հաստատված կարսեցի գաղթականներից շատերը և հատկապես նրանց երեխաները սովամահ են լինում։ Քաղաքից գրեթե ամեն օր սայլերով երեխաների դիեր էին տանում[5]։

---

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 11, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 39։

[2] Տե՛ս **Մենակ Ա.**, Կարսի նահանգի նշանակությունը // «Յառաջ», 1920, թիվ 247, էջ 3։

[3] Տե՛ս **Սարգսյան Ե.**, նշվ. աշխ., էջ 498։

[4] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 6։

[5] Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյանի (ծնվ. 1926 թ. Աղբուլաղ, ականատես՝ Զարդար Հովհաննեսի Հարությունյանի (ծնվ. 1880 թ., Բվիկ, Կարսի մարզ) աղջիկը։ Պատմությունը գրի է առնվել մեր կողմից, գտնվում է տողերիս հեղինակի անձնական արխիվում։

Վանանդի նահանգում մեծ թիվ էին կազմում նաև ցեղասպանությունից փրկված և այստեղ բնակություն հաստատած արևմտահայ գաղթականները (Մուշի, Բասենի, Բաղեշի և այլ շրջաններից), որոնք, տեղի բնակիչների հետ դիմելով փախուստի, հասնում են Երևան[1]: Կարսի նահանգից վերապրածները թուրքական գործողությունները անվանում էին «ջարդեր», կողոպուտը՝ «ալան-թալան», իսկ բռնաճնշումների հետևանքով առաջացած գաղթը՝ «փախեփախ»[2]:

Վերջաբան

Կարսում հայկական սրբությունները ոտնատակ էին տրվում: Կարսի նորաշեն Սուրբ Լուսավորիչ եկեղեցին ամբողջովին կողոպտվեց: 940-ական թթ. կառուցված Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին թուրքերը կրկին վերածում են մզկիթի՝ գմբեթից հեռացնելով խաչը և դրա փոխարեն կիսալուսին տեղադրելով[3]:

«Կոմունիստ» թերթի 1921 թ. փետրվարի համարում Ա. Եսայանցը գրում է, որ հայ ազգաբնակչության նկատմամբ «տաճիկների Ղարսում կատարած անօրինակ գազանությունները գերազանցում են անգամ 1895-96 և 1908 թվականների սուլթան Համիդի և երիտասարդ թուրքերի ձեռքով կազմակերպված կոտորածներին»[4]:

Զանգվածային կոտորածներից հետո Հայաստանի Արտաքին գործերի կոմիսար Ա. Մռավյանը Կարսի շրջանում տիրող վիճակի մասին հեռագրում է ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Բ. Լեգրանին՝ նշելով, որ այնտեղից տագնապալից լուրեր են ստացվում հայ բնակչության մնացորդների և գերիների նկատմամբ թուրքական իշխանությունների վերաբերմունքի մասին: Նա հաղորդում է, որ թուրքական հրամանատարությունը շարունակում է հայերի ֆիզիկական ոչնչացման նախկին քաղաքականությունը՝ բնակչությանը աքսորելով Թուրքիայի խորքերը: Նշում է 15 օր առաջ Կաղզվանի 500 հայ փախստականների Էրզրում քշվելու մասին՝ փաստելով, որ նույն ճակատագրին են արժանացել նաև Սարիղամիշի հայերը: Ա. Մռավյանը խնդրում է Լեգրանին առաջիկայում՝ մինչև Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքումը (հարկ չհամարելով Հայաստանի կառավարության անունից

---

[1] Տե՛ս Երևան հասած նոր փախստականների վիճակը // «Յառաջ», 1920, թիվ 249, էջ 2:

[2] Բանասաց՝ Հռիփսիկ Հարությունյան: Բանասաց՝ Միշա Մինասյանի (ծնվ. 1928 թ., Ղալթախչի), ականատես՝ Մարգարիտ Ավագյանի (ծնվ. 1905 թ., Փալդրվան, Կարսի մարզ) որդին: Բանասաց՝ Ասյա Ստեփանյան (ծնվ. 1942 թ.), ականատես՝ Հերիքնազ Գալստյանի (ծնվ. 1888 թ., Մազրա, Կարսի մարզ) թոռը: Բանասաց՝ Ազնիվ Աֆրիկյան (ծնվ. 1946 թ., Հարթագյուղ), ականատես՝ Ալաշկերտյան Վարդիթերի (ծնվ. 1908 թ., Ղզըլ Չախչախ, Կարսի մարզ) հարսը: Վերապրածների մասին տեղեկությունները և պատմությունները պահվում են տողերիս հեղինակի անձնական արխիվում:

[3] Տե՛ս **Ավետիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 105:

[4] **Եսայեան Ա.**, Տաճիկները Ղարսում // «Կոմունիստ», 1921, թիվ 48, էջ 1:

գործել տվյալ հարցի վերաբերյալ և կամենալով իրենց գործողությունները համաձայնեցնել Բ. Լեգրանի հետ), միջոցներ ձեռք առնել՝ կոտորվող բնակչությանը փրկելու համար՝ կարծելով, որ ՌՍՖՍՌ ներկայացուցչի առկայությունը Կարսում թուրքերի համար զսպող նշանակություն կունենա[1]:

Սկզբնաղբյուրների սակավության պատճառով դժվար է նշել, թե իրականում որքան մարդ է կոտորվել Կարսում և գերեվարվել: Որոշ սկզբնաղբյուրներում նշվում է, որ Կարսի մարզում (նահանգում) կոտորված բնակչության թիվը եղել է 12.000 (հիմնականում տղամարդիկ)[2]: Մեր կարծիքով՝ այս թիվը ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը, ըստ որոշ սկզբնաղբյուրների՝ 15-ից մինչև 60 տարեկան տղամարդկանց մեծ մասը՝ շուրջ 30.000, գերեվարվել է[3], որոնց մեծ մասը սպանվել է ճանապարհին և աքսորավայրում: Գերիների և սպանվածների թվերը մոտավոր ներկայացնում են առանձին պաշտոնյաններ ու անհատներ (Ա. Լյուլիկյանը, Ա. Եսայանցը, Գ. Գևորգյանցը, Վ. Իոնեսկոն և այլք):

Կարսում էր գտնվում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Սարգսյանը, որը զբաղված էր Թուրքիայում մնացած հայ գերիների և որբերի հարցերով: 1922 թ. ապրիլի 4-ին Քյազիմ Կարաբեքիրի հետ ունեցած բանակցությունների ժամանակ վերջինս նրան խոստացել էր մեկ ամսվա ընթացքում վերջնական պատասխան տալ Թուրքիայում մնացած բոլոր հայ գերիների մասին[4]: Կարսից, Ալեքսանդրապոլից և այլ վայրերից բռնությամբ Էրզրում քշված 60.000 հայ ռազմական և քաղաքացիական գերիների փոքր մասը միայն վերադարձավ Հայաստան, մնացյալը կոտորվել էր կամ մահացել ցրտից և սովից: 1922 թ. ԽՍՀՄ կազմավորմանը համընթաց Թուրքիայում և այլ երկրներում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները լուծարվեցին[5]:

Կոտորված հայերի քանակի մասին տեղեկությունների սակավությունը պայմանավորված է Վանանդի նահանգի թուրքական ռազմակալումով, թուրքական իշխանությունների վարած քաղաքականությամբ և հետո կնքված Մոսկվայի և Կարսի պայմանագրերով, որից հետո հայերը հնարավորություն չունեցան համապատասխան հանձնաժողովներով աշխատանք տանել այնտեղ, ինչպես դա կատարվեց Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառներում:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Կարսի նահանգից փրկվել են հիմնականում կանայք, որոնք հաստատվել են հատկապես

---

[1] Տե՛ս **Ներսիսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 165:

[2] Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, էջ 181:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 35, 36:

[4] ՀԱԱ, ֆ. 131, ց. 1, գ. 102, թ. 5:

[5] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը հայ ժողովրդի ճակատագրում, քննական հայացք 100-ամյա հեռավորությունից // «ՎԷՄ», 2021, թիվ 3, էջ 46:

Հայաստանի Հանրապետության Շիրակի նահանգում: Հետաքրքրական է, որ օրինակ՝ Փամբակի ռազմակալված տարածքում պատկերը հակառակն է. քեմալականների կողմից հիմնականում սպանվել են կանայք և երեխաներ, իսկ կոտորածներից առաջ գյուղերից հեռացած և հետո վերադարձած տղամարդիկ հետագայում ամուսնացել են Կարսի նահանգից բռնագաղթված և այդտեղ հաստատված կանանց հետ:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ թուրքական բանակի կատարած զանգվածային կոտորածները Կարսում ցեղասպան գործողություններ էին: Թուրքերը ոչնչացրել են գրավյալ տարածքների հայ խաղաղ բնակչությանը, բռնությամբ տեղահանել նրանց: Այդ զանգվածային հանցագործություններն իրագործվում էին մարդկանց ֆիզիկապես ոչնչացնելու և հոգեկան խեղումներ պատճառելու մտադրությամբ, որոնք ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի՝ տվյալ հանցագործության հանցակազմի կարևոր բաղադրատարրերն են: Այսօրինակ քաղաքականությունը շարունակվեց նաև Շիրակի նահանգում, մասնավորապես՝ Ալեքսանդրապոլի գավառում: Կարսի բռնազավթման, կոտորածների և բռնագաղթի հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր պատմական հայրենիքի մի մասից:

Վազգեն Հախոյան – *Կարսի հայության կոտորածը 1920-1921 թթ.*

Հոդվածում ներկայացվում են 1920-1921 թթ. քեմալականների կողմից Կարս քաղաքում հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված կոտորածները, բռնաճնշումներն ու թալանը և նրանց հետապնդած նպատակները: Կարսի մարզը միշտ եղել է թուրքական իշխանությունների թիրախում: Նրանց վարած ազգային-կրոնական, սոցիալ-տնտեսական և շարունակական ցեղասպան դրսևորումներով արտահայտվող հայահալած քաղաքականության հետևանքով հայերի թիվը այդ տարածքում պարբերաբար նվազել է: 1920 թ. տեղի ունեցած թուրք-հայկական պատերազմը ողբերգական հետևանքներ է ունեցել Վանանդի և Շիրակի նահանգների համար: Կարսում երեք օր տեղի են ունեցել դաժան ու արյունալի կոտորածներ: Տեղի բնակիչների հետ կոտորվել են նաև քաղաքում պատսպարված նահանգի բնակիչները, որոնք փրկության ակնկալիքով շտապել էին այդտեղ: Սպանվել են հազարավոր մարդիկ՝ կանայք, երեխաներ, ծերեր: Տղամարդկանց, պատանիների և զինվորների մեծ մասին գերեվարել են, որոնցից շատերին սպանել ճանապարհին և աքսորավայրում: Բռնությունների են ենթարկվել Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող որբերը: 1920 թ. սկսված կոտորածները ավարտվել են 1921 թ., մինչև զարուն իրականացված բռնի տեղահանումներով: Ուսումնասիրությունները և կատարված վերլուծությունները փաստում են անձնատուր եղած քաղաքում տեղի ունեցած ցեղասպան գործողությունների մասին, որի նպատակը հայ ժողովրդին իր հայրենիքից զրկելն էր: Կարսի նահանգի կոտորածները և հայաթափումը կարելի է համարել Հայոց ցեղասպանության շարունակականությունը՝ արդեն Արևելյան Հայաստանի տարածքում:

Вазген Ахоян – *Резня армян Карса в 1920-1921 гг.*

Ключевые слова *– Карс, провинция Вананд, провинция Ширак, истребления, кемалисты, геноцид, очевидец, свидетельства, мемуары, сироты, пленники, депортация*

В статье представлены резня, репрессии и грабежи, осуществленные кемалистами по отношению к мирному армянскому населению в городе Карс в 1920-1921 годах, а также преследуемые ими цели. Карсская область всегда была мишенью турецких властей. В результате политики преследования армян, с ее национально-религиозными, социально-экономическими и постоянными геноцидальными проявлениями, численность армян на этой территории постоянно сокращалась. Турецко-армянская война 1920 г. имела трагические последствия для провинций Ванand и Ширак. В Карсе три дня происходили жестокие и кровавые расправы. Вместе с местными жителями были истреблены жители провинции, приютившиеся в городе, которые поспешили туда в надежде спасения. Погибли тысячи людей – женщины, дети, старики. Большинство мужчин, подростков и солдат попало в плен, многие из них были убиты по дороге или на на месте ссылки. Жестокому насилию были подвергнуты сироты, находящиеся на попечении Американского комитета помощи Ближнему Востоку. Массовые убийства, начавшиеся в 1920 г., закончились принудительными выселениями, продолжавшимися до весны 1921 года. Проведенные исследования и анализ доказывают факт геноцидальных действий в сдавшемся городе, целью этих действий было лишение армянского народа его родины. Резня и выселение карсских армян можно считать продолжением Геноцида армян уже на территории Восточной Армении.

Vazgen Hakhoyan – *Massacres of Armenians in Kars in 1920-1921*

Key Words *– Kars, Vanand province, Shirak province, massacres, the Kemalists, genocide, eyewitness, testimonies, memoirs, orphans, captives, homeland-deprived*

The article presents massacres, repressions and looting of the Armenian civilian population in Kars by the Kemalists in 1920-1921. Kars province was always a target of the Turkish authorities. Due to the national and religious, socio-economic, and genocidal policies of continuous persecution of Armenians, the number of Armenians in that area was steadily declining. The Turkish-Armenian war of 1920 had tragic consequences for the provinces of Vanand and Shirak. Cruel and bloody massacres took place in Kars for three days. Along with the locals, the residents of the province, who had sheltered in the city in the hope for salvation, were massacred. Thousands of people were killed - women, children, the elderly. Most of the men, teenagers and soldiers were taken prisoner, many of whom were killed on the way to exile. The orphans under the care of the American Middle East Relief Committee were abused. The massacres and forced deportations, which had begun in 1920, continued till spring 1921. Research and analyses prove the genocidal actions that took place in the surrendered city, the aim of which was to deprive the Armenian people of their homeland. The massacres in Kars province and the eviction of the Armenians can be considered the continuation of the Armenian Genocide already in the territory of Eastern Armenia.

Ներկայացվել է 17.01.2022
Գրախոսվել է 31.01.2022
Ընդունվել է տպագրության 29.03.2022

Վազգեն Հախոյան – Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ (van.karno@gmail.com)